Ա· Յ· ՊԱՐՐԻԼԻ

Հայրենասէր ու ազգասէր անձի մը մեծապէս ուրախական է անշուշտ՝ տեսնալ որ իր ազգային պատմութիւնն ու քաղաքունքն ծանօթանալով օտար ազգաց՝ անոնց գրչին ու մտադրութեանը նիւթ կ'ըլլան։ Ուրախութեան այդ բնական զգացումը զմեզ ալ գրաւեց, երբ ձեռքերնիս հասնելով՝ կարդացինք Ա· Յ· Պարրիլեայ Իտալացւոյ Շամիրամ անուն գրուածքը, վիպասանութիւն 'ի վերայ անցից բաբելական թագուհւոյն ընդ Արայի Գեղեցկի։ Եթէ ախորժեցաւ Եւրոպացին իւր հանճարոյն նիւթ առնուլ արևելեան կամ հայկական այդ վաղժամանակեան դէպքը, մեզ ախորժելի ու սիրելի ևս է թարգմանութեամբ հաղորդակից ընել զմերազնեայս այդ հետաքրքրական երկասիրութեան. բայց յառաջ քան սկսանելու՝ ներեն մեզ ընթերցողք նախ երկու խօսք մ'ըսել Պարրիլեայ կենացն ու գրուածոց վրայ։

Անտոն Յուլիոս Պարրիլի, ներկայացեալ աստ 'ի պատկերի, ծնաւ 'ի Սավոնա 1836ին, դեկտեմբեր ամսոյն մէջ։ Մանկութեան առաջին տարիները Նիցցա անցուց հօրը հետ, ուր գնացեր էր նա վաճառականական գործոց պարապմամբ։

digitised by A.R.A.R.@

Բայց ապա դառնալով 'ի Պավոնա, դպրոց մտաւ՝ տալով ինքն զինքը մատենագրական ուսման, յորում և մեծապէս փայլեցաւ։ 1851ին իրաւագիտութիւն սորվելու վախճանաւ Շենովա գնաց, և տասնեւութ տարուան հասակին մէջ ուսումնական ու քաղաքագիտական յօդուածներ կը հրատարակէր օրագրաց ու լրագրաց մէջ, որոնք սկսաւ երևցընել իր հանճարը։ Քսան և երկու տարուան էր երբ խմբագրի պաշտօն կը վարէր Շենովայի Ազգ (Nazione) լրագրոյն. քսան և երեք տարուան կամաւոր զինուոր գրուեցաւ կանոնաւոր բանակին, և մասնակցեցաւ 1859 տարուոյն ազգային աղատութեան պատերազմին, ինչպէս նաև 1866ին 'ի Դիրոլ։

Պարրիլի եռանդուն հայրենասէր միանգամայն և բազմաբեղուն մատենագիր, հանդերձ այս ամենայն զրաղմամբք զանազան ընտիր գրքեր հրատարակեց, որոնք ամենքն ալ ունին իրենց յատուկ գեղեցկութիւնները. Նաւապետն Տոտերոյ (Capitan Dodero), Կնձնի և Բաղեղն (L'Olmo e l'Edera), Սեաւ Մատեանն (Il Libro Nero), Ս. Կեկիլիա (S. Cecilia), Կարմիրք և Սեաւք (Rossi e Neri) և Ձիրեանաց Հովիտ (Val d'Olivi): — Ասոնք ամենքն ալ խորին գգաստմամբ և մասնաւոր աշխուժիւ գրուած են։ Կը տեսնուի որ Պարրիլի լաւ ըմբռնած է թէ պէտք չէ վիպասանութեան մէջ մանրամասն պարզել ամեն մարդկային կիրքերը, այլ թողուլ միշտ ինչ ինչ ընդ քողով ընթերցողաց գուշակելի։ Ունի մեծ եռանդն և նրբութիւն, և ամեն էջերն կը ներշնչեն անբացատրելի զգացումն քաղցրութեան և գորովոյ։

Ասոնք են աւասիկ վերոյնշանակեալ գրութեանց յատուկ կատարելութիւնները. յետ որոց գերագոյն ու նոր տեսակ գրութիւն մ'ալ կը սպասուէր 'ի Պարրիլեայ, որ յաղթէ ու գերազանցէ զառաջինսն։ Իտալացի գրագէտն բանասիրաց այդ փափաքին համապատասխանելու համար՝ թողուց Իտալիոյ ափունքը, ուղղեց աչքերն յօտար և 'ի հեռաւոր ափունս, ընթացաւ 'ի Թեւս մտաց՝ Արևելք, 'ի Հայաստան և 'ի Բաբելոն։ Պարրիլի նոր աշխարհիս սովորութիւնները քննելէն ու նկարագրելէն ետքը, դարձաւ 'ի հինն աշխարհ, հարաւ 'ի սէր նորա, և ղեգերելով ժամանակ մի 'ի մէջ արևելեան գեղջ և յիշատակաց Բաբելոնի, 'ի լոյս ընծայեց զՇամիրամ, և անով աւելի ևս ծանօթացուց ինքն զինքը աշխարհի, յորում պիտի տեսնայ ընթերցողն մեծ արուեստ, երկար ուսումն և նրբութիւն հանճարոյ։

Գրուածքին անունը Շամիրամ ըլլալուն ըստ հեղինակին, պիտի զարմանայ անշուշտ ընթերցողն, տեսնելով անուանեալ 'ի մէջն Արա Գեղեցիկ. ասիկայ ուրիշ վախճանաւ չըրինք, բայց որպէս զի աւելի հայկական կերպարան մը տանք, և արդէն ուրիշ կողմանէ այդ վիպասանութեան մէջ՝ բաբելական թագուհւոյն հաւասար գլխաւոր անձ է և մեր դիւցազն։

digitised by A.R.A.R.@

ԱՐԱՔ ԳԵՂԵՑԻԿ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

Ա. Ց. ՊԱՐԲԻԼԵԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

Ի ԴՐՈՒՆՍ ԲԱԲԻԼՈՒ.

Եփրատայ ափանց վրայ՝ համատարած, դուարթահայեաց ու բազմաբեղուն երկիր մը կը տարածուի, Անենաբ կոչեցեալ յանուն Քուշայ որդւոյն, խաչնաւէտ, բաղմացորեան և ճոխացեալ ազգի ազգի բարութեամբը, զորս Թափեց լիաձեռն ջրոց բազմազօր աստուածը, փոխելով Ի պարգև առատութեան իր ապականիչ բարկութիւնը։ Անդ, Ի միջավայրս ընթացից մեծանիստ գետոյն, ընդարձակ քաղաք մը կը բարձրանայ, որոյ նման երբէք տեսած չէր աշխարհ, զոր կառոյց Նեբրովթ Քուշայ որդին, որստրդ քաջաղեղն առաջի Նեբեայ, որ ջրոց հեղեղէն փախուցելոց հետ մէկտեղ էր, քանի որ մրրկայոյզ ազգս նման տակաւին ցրուած չէին վերածնեալ երկրիս երեսը։ Այդ քաղաքին անունը Բաբիլոն ըսուեցաւ, որ կը նշանակէ դուռն Իլու, աստուած ջրհեղեղի. և ամփոփեցաւ Ի սկզբան գետոյն ալիակոծման եզերաց վրայ, լեռուց երկնասերձ աշտարակին Պարսիրայի չորս կողմը, զոր շինողքն Թոդուցեր էին անդ Ի միջի, այլ ընդ այլոց բարբառելով, սահաբեկեալք Ի գետնաշարժէ և Ի կայծականց։ Այսպէս ահա, Նեբու, աստուած ինքնածին, հրամանատու գնոցից երկնի և երկրի, պաշտանեց իր կապուտակ բնակարանը՝ որդւոց մարդոյ յանդուգն ձեռնարկութեանց դէմ[1]։

Սա նուազն տան և հինգ հասակի անցեր էին Դիսբարբայ մեծատարած թեւոն տակ, և ընդարձակեալն Բաբելոն՝ սահար ու բնակարան մեծաց աստուածոց, կը տարածուէր գետոյն կրկին ափանց վրայ, սեղմելով զայն սիրալիր գրկացը մէջ, որպէս օրիորդ մանկահասակ զսիրելին իւր։ Զէր կրնար իրեն հետ Ի կիր դնիուէ, զոր կառոյց յառաջ ժամանակաւ՝ Ասուր, որ պիտի սպասէր տակաւին ընդ երկար թագաւորութիւն Փաղասարին, միասին բարբաստիկ, որ դայ ու ամրանոյ գնա Ի գլուխ մեծի ինքնակալութեան Այսրեստանեայց։ Սիպար՝ նախ ջրհեղեղեան, Ուռ՝ քաղդէական, Լարսա, Քաղանէ և Որէք բազմաժողովք, բարգաւաքք յարուեստս և Ի տուրեաւոտ կը փայլէին իրեն չորս կողմը, նման մեծի կենաստուին ու լուսաստուին մոլորակաց, զորոց տաճարն ու գրօշեայն ամփոփած էր իր նուիրական պարսպաց մէջ։

Նեբրովթայ յաջորդաց զօրաւոր գաւազանին կը հպատակէին չորս սերունդք. Սումիրք՝ Քանձրախօսք, Աքքատք նախանձալից պահապանք ծածուկ գիտութեան երկնից, Թուրացիք՝ իշնալք Ի դաշտավայր Ի ձեռն Մարաց եղբայրակից ցեղից, և մնացորդք Սեմայ ցեղին, հալածեալք քուչական ալիարհակալէն, բնակելու յերկիրն Նահարիմայ։ Բայց ոչ թէ միայն մեծատարած դաշտավայրն կը հնազանդէր Քիրրադ Ադբագի կամ՝ շորից բարբառոց քաջնուն ժողովրդեան, այլ Դիմոսի արութիւնն ձգեց զիշխանութիւնն Բաբիլոն Ի բարձունս և Ի թիկունս լերանց, և ապա Շամիրամայ բազուկն երկայնեցաւ յափանց Տիւրոսի մինչև ցհովտաձորս Բակտրիոյ, յերկրէն համամից զոր թանայ Ներետրիոս, անդր քան պարբերակունս Եփրատայ և Տիգրիսի։ Գրեթէ կրկոր յերկիր կործանեցան քան ապիրք, և հեռաբեալ իշխանք պարտաւորեցան Ի հարկատուութիւն։

Սոսնցմէ չատերն կը հատուցանէին բրենց պարարքը յօժարափոյթ կամօք, և կ'ինչնային Ի Բաբելոն ապշեալք ու խոնարհամտ. (կը հաշուին արդէն նոյն ժամանակէն քառասուն և երկու հասակք). բայց անոր գագաթը ինքն չի բարձացուց։ Մարդիկ Թոզուցեր էին զայն յեա աւուրց ջրհեղեղին, այլ ընդ այլոյ խօսելով Գեանաշարժն ու կայծակն ցրուեր էին իր արեւէն յամոքեալ կաւը. եփեալ ապէսք որ կը զարգարէին զայն՝ ձեղքեալ էին. ներքնայն կաւը քակեալ էր։ Մերովդաք մեծ աստուածը, ներշնչեց յիս վերանորոգել զայն. գերքը ջիսխեցէ և ոչ հիմունքը խախտեցի»։

1 Բաբելոնի աշտարակին դէպքը Նաբուքոդոնոսորայ յիշատակարանի կը կարդէն նոյն թագաւորէն քառասուն և երկու հասակ կամ մարդոյ կեանք առաջ (2940 տարի). որ է ըստ 3540 տարի առաջ քան զԹուտմոսն Քրիստոսի։

Պարսիրայի վրայ դանուած սեպագիր գրութիւնն, ըստ մեկնութեան ամենահմտին Օբբերդի ունի զայսմիսատ. «Երկրիս եօթն լուսոց տաճարը, որոյ հետ կը միարանի Պարսիրայի ամենէն վաղեմի յիշատակն, շինուեցաւ հին թագաւորէ

միտք, որպէս ի քաղաք նուիրական իշխան և տէր աշխարհի։ Այդքան չքեղաշուք էր մեծաց ատուածոց ընակարանն, այդքան չքնաղաչէն էր Նինոսի այրիայեալ ամուսնոյն արքունիքը։ Կնոջ ընծայեալ պատիւը չի նուաստացներ զկանանացածինս, մինչդեռ Շամիրամ իր գերմարդկային գիմաց գեղոյն՝ չքեղայեալ քան եթէ անչքացեալ ամսոց երկարութենէն, երկնակենցաղ իմն կը թուէր և ոչ պտուղ մահաբեր հարանանաց։ Իւր յիրաւի, ոչ այնչափ անչուք ծնունդ մը մտացածին մտայոլ ծածկելու, որչափ փայլ մ՝աւելցընելու համար Շամիրամայ ատուածատիպ գեղեցկութեանը, քահանաց Պարսիրայ կարգացային զնա յատեղս դուստր Հայգեռայ մեծի գիցուհւոյն Ասկալոնիոյ, սկսեալ այն օրէն յորում՝ Նինոս հարեալով ի սէր նորա, ընտրեց զնա իւր կողակից, առնելով գրչոյոյ իւր սրտին, և իշխան ու տէր աշխարհիս մեծաչուք գահուն։

Այս միջոցներս Նինոս մեռած ըլլալուն՝ Շամիրամ առանձինն կը թագաւորէր, և էր սէարկու ամենուն ու երջանիկ։ Իրեն մէկ ակնարկութեամբն ընդարձակեցաւ քաղաքն, պարսպեցաւ ու զարդարեցաւ մեծակառոյց չէնքերով։ Երկու միլիոն մարդիկ կ՝աշխատէին իրեն համար. ոմանք գետինը կը փորէին, կէսք ագիւսաձև գոգեղին եփեալ կաւը, և ալիք կուսոր կը հանէին խանուն մերձաւոր երկրէն։ Ինչ ատենուան մէջ բարձրացաւ պարիսպն, և էր ամրակառոյց ու զեղեցկաչէն։ Դիմիդի Բէլ՝ ներքին պատուարն, ունէր երեք հարիւր վաթսուն վտաւան երկայնութիւն, յիսուն կանգուն բարձրութիւն, և ասանելութ լայնութիւն։ Իմկուր Բէլ՝ արտաքին պատուարը, ունէր չորեքհարիւր ութսուն վտաւան շրջապատ, և քան զշրջակայ լայնածաւալ փոսն իննսուն կանգնաւ ի վեր կը բարձրանար. և կային կրկին շարք աշտարակաց, որոց միջէն ազատաբայլ կ՝ընթանար քարուանքն։ Այս պարիսպը, որոյ կողից վրայ կը բացուէին հարիւր դրունք պղնձագործք, ազիւսաչէն էր, որոյ մէկ երեսը ըստ պատշաճի չորոցած, և միւսը փոսն մէջ եփած, և ամեն երեսուն վտաւան հեռաւորութեամբ մէկ մէկ եղեգնաչէն խիտ վանդակներ կային՝ զտնգեալք ի կուսոր և ի դուրս ցցուեալք քան զմակերևոյթ պարսպին, անանկ որ կարմրախառն հոյակերտ չինուածքն կը տեսնուէր ի հեռուստ դեղեցիկս ժապաւենեալ ի սեագունէ։

Եփրատ խարանշագոյն կը հոսէր ի միջոյ. վասն որոյ պարիսպն երբ կը հասնէր ջրոց սահմանին, կը թեքէր անկիւնաձև, կը փորրկանար ու կը բարակնար պատկանման գետոյն պատնիշաւոր եզերաց մօտ, որոց վրայ կը բացուէին նոյնքան բերդով, քաղաքին ճամբանեին, ուղիղք և լայնարձակք, ամենքն ալ հաւասարանք պղնձագործ հարիւր դրանց։ Այս ճանապարհաց եզերաց վրայ որ բազմարնակք էին, կը բարձրանային եռայարկ տուներ, ընդարձակք, ոչ կիսք իրարու, այլ ընդմիջալք ի պարտիզաց և ի հրապարակաց։ Ամենոյն ամսան վրայ կ՝ընկնար քանանայական քաղաքը, հանդերձ իր բնեայ տաճարովն, բարձրանէն բուրգն եօթնայարկ, նկարեալ ի գոյն եօթն լուսոց երկնի, որոյ ծայրէն, Բաբելոնի մեծ աստուածն՝ Բէլ, կը գիտէր իր սիրելի քաղաքը։ Իսկ ճանապարհն ամսան վրայ կը գտնուէր աղբունիքն, ամրացեալ շրջապակ գեղեցկանկար պարսպաւ, հովանոցօք և կախաղանաւոր բուրաստանօք։ Երկու գետափունքը կը միացնէր իրարու հետ հինգ վտաւան երկայնութեամբ գեղեցիկ կամուրջ մը, զոր ի վեր ունէին կամրջակալք՝ վարտեալք ի տաշն Եփրատայ։ Կամրջակալ ըստ ծնիս երկաթի ճանկերով հատատեալ և կապարաւ զօդեալ քարեր էին, որոց երեսք գետոյն ընթացից դէմ դարձած ըլլալուն, թուէին հատեալք ի սրանիւնս։ Կամուրջն որ ունէր քսան կանգնոյ լայնութիւն, տափատակամած մ՝էր յիզնափայտէ և ի նոճուց, հաստատեալ արմաւենոյ մեծահաստոր բունոց վրայ։

Զատանք և ուրիշ շատ բաներ կատարեց Շամիրամ. վասն զի Փիւնիկիոյ ու Բակտրիոյ աշխարհակալին՝ չէին պակասեր բազուկք գործաւորի, ուսկից բերեր էր պատերազմական կառայն եռեւէն երկայն շարք մը շղթայակալ գերեաց։ Ինչպէս Բաբելոնի պարիսպն, տաճարքն ու բուրաստանք կը պատմեն յետագայից Շամիրամայ մեծութիւնը, նոյնպէս և Եփրատ, զոր զսպեց ամրակառոյց թումբերով ընդ երկայնութիւն բազում աւուրց ճանապարհի, և զուգաչափ հեռաւորութեամբ լայն նաւարկելի ջրանցքներն ու հազարաւոր ատուակք յարբունն արտորէից, կը ցուցընեն դչխոյին մեծաչափ իմաստութիւնն ի բարօրութիւն իւր ժողովրդեանը։ Ուստի կրընանք առանց սուտ ասելութեան գրել իր արքունեաց որմոց վրայ այս ազնուական գովասանաց տողերը.

« Ընութիւնն տուաւ ինձի կերպարան
« կնոջ, բայց իմ գործերովս հաւասարեցայ
« մարդկ անց հղօրագունին։ Իշխեցի Նինոսի
« Պետութեանը, որ յարևելից ունէր սահ-
« ման Ինդոս գետոյ, ի հարաւոյ համամիջ
« ու խնկոց աշխարհները, և ի հիւսիսոյ

digitised by A.R.A.R.@

«զՊոկտիացիս և զՍագաստանՑառաջ քան
«զիս ոչ մի բաբելացի տեսեր էր զծով. ես
«չորս ծով տեսայ, որոնք այնպէս հեռու էին՝
«ուր ոչ ոք կրնար հասնիլ։ Ստիպեցի զե-
«տերն հօն վարել՝ ուր կամեցայ. և ոչ կա-
«մեցայ՝ բայց եթէ երբ օգտակար դատեցի
«ժողովրդոցս։ Անարգասարեր գաչտերն
«արգասարեր ըրի, քաղաքներն անառիկ
«կերպով պարսպեցի, անմատչելի ժայռից
«միջէն երկաթով ճամբայ բացի. ուսկից
«որ անցայ՝ հօն լայն ճամբաներ բացուե-
«ցան, և չառաչող կառքերս անցան դիւ-
«րութեամբ այն տեղերէն՝ ուսկից կը դը-
«ժուարէին առաջուց գազանք։ Եւ այս ա-
«մեն բաներն ընելով հանդերձ, դատայ ժա-
«մանակ նուիրելու զբօսանաց ու բարեկա-
«մաց»։

Ա.յսպէս Շամիրամ յետ ծանր աշխատու-
թեանց պատերազմի, կը հանգչէր իր քաղա-
քին ճոխութեանց մէջ զորս ամեն օր կը թա-
փէին անդ բնութիւնն և ճարտարարուեստք
հպատակ ազգաց։ Իրեն համար Երջանիկն
Ա.րարիա կը կաթեցնէր գինւոյ. իրեն հա-
մար Տիւրոս կը հիւսէր կոաւ սպիտակա-
փայլ, և կը թանար ի կենդանի գոյն ծիրա-
նւոյ. իրեն համար Պարսատան կը մարդէր
հողմնթաց երիվարներ և Հնդկաստան
յաղթանգամ փիղեր։ Ա.ջքատի ցեղին ոս-
կէգարն էր, քանի որ չէին գրգռեալ ի վը-
րէժխնդրութիւն Ցաւանայ որդիքն, քա-
ջաշէնք և բազմաթիւք յանձուկ սահման-
ի, որոնք թիչ մը ժամանակ ալ պիտի կրէին
տակաւին գերութեան չղթայն, մինչդեռ ի-
րենց Ձերտուշդ իշխանը, սրատես աչքը
և մտքը, հիւր հարկատու երջանիկ դչխո-
յին, կը ջանար, թէպէտ ի զուր, հաճոյա-
նալ իրեն։

Փոթորիկս նախագուշակ ամպը տա-
կաւին տեսնուած չէր Բաբելոնի անպրդ-
ատոր երկնից երեսը, քանզի կը հսկէին
տակաւին ի պահպանութիւն նորա գեր-
գոյն Դիր. Իլու, աստուած մեծ, զուրկ ի
բազնայարկ տաճարէ և ի սեղանոյ, վասն
զի ամբողջ քաղաքն իրեն սեպանն էր, և տա-
ճարն՝ բոլոր համաստաված մարդն զոր արգա-
սաբեր գործեր էր։ Նեբու, տէր կապուտակ
կամարին. Բէլ՝ լուսատու. Այ՝ ձուկն աս-
տուած, որ բիրաւ ոտաջին թաղաքակրթու-
թիւնը ի կոհակաց ծովու. Ինն լուսաւորիչ
գիչերոյ, Միլիզդա, կամ Տայգետա, կամ
Ռէա, ըստ տեղեաց՝ Աստղիկ ծննդագործ,
մեծ մայրն հարիւրաստանի, որոյ սրբանուէր
անտառն և գիչերախառն պաչտամունք-
ներն կը ժողովէին ի Բաբէլոն անհամար
բազմութիւն մ՝ երիրպագուաց։

Սենաարայ երկիրը կը կերակրէր զա-
մենքն առատապէս, արգասարեր էր հա-
ւասար այն երկրին՝ զոր ոռոգանէ մեծն Դե-
զոս յաղթաթուր ալեօք։ Կը բուսցրնէր ի
բնութենէ սրմաւենի, նռուն, գարի, և
չուշմայ. ցորենն երկհարիւրապատիկ և եր-
բեմն երեքհարիւրապատիկ կը պտղաբե-
բէր, և կրկին էր հունձքն ամեն տարի ինչ-
պէս ի Մեսոպոտամիա. Բազմապտոյտ Եփրա-
տայ մեծ, որոյ ափունքն չարունակ կը հեր-
կուէր ի ծանրաչարժ կառաց, կը տարա-
ծուէր գոգցես անսահման լայնածաւալ
դաշտագետին մը, փայլելով արեգական
ճառագայթից տակ հատիկաթուռ սրմբտեօք։
Երբեմն երբեմն չարժուն հասկաց ոսկե-
գոյն ծուէն գուրս ցցուեալ կղզեաց նման
կը բարձրանային արմաւենիք դիւրաթեք
բուներով, և կը ծածէին հովանաձև մարգա-
չատ գիւղից վրայ, որոց տուներն կլորաձև
էին, որմունքն փայտակիրտ, տանիքն կո-
նաձև, դուռներն բարձրաչէն ծեփեալ ի
կուպր, բնակարանք գաղթականաց ու գոր-
ծաւորաց։ Իսկ իրենց գլխաւորաց տուներ-
ը, հասարակաց չէնքերը և աստուածոց
տաճարները՝ քառաձև և ապիտակերաք
էին, երբեմն չորացեալք և երբեմն եփեալք
ի հուր, և թանձր ջնարակով կանաչագոյն
օծուած ըլլալուն՝ կը փայլէին գեղեցկա-
պէս։ Կը տեսնուէին ի հեռուստ դաչտա-
գետնոյն վրայ ցրուած քաղաքներն, իրենց
սպիտակափայլ հովանոցներովն և ամրա-
կուռ աշտարակներով. իսկ անդից և արա-
տորէից կենդանի կանաչ գոյն ընդհա-
տեալ կ՝երևար ատ անգ յանհամար լանա-
գոյն գիծերէ, և էին ամբարտակք հարիւր
ջրանցիցն՝ որոնք իջնելով յԵփրատայ կը
թափէին ի Տիգրիս, ճանապարհս լոյծք՝ ո-
րոց վրայէն կ՝ուղևորէին վահանաձև նռ-
ատենիք արագընթացք ըստ պահանջելոյ
հոսանացն, և կը տանէին ցորեան և պըտ-
տուղ։ Այս նռատենիքն ուռենոյ ոստերէ
շինուած էին՝ մորթով ծածկեալ ու կպրա-
ձիւթեալ, որոնք իրենց գիտեալ նպատա-
կին տեղը հասնելէն ետքը, նաւուղիղք կը
քակէին զանոնք, փայտերն կը ծախէին, և
իրենք կը գառնային հետեւակ, մորթին
գլուխնուն վրայ առած կամ յատանակի մը
գաւակին վրայ բեռցուցած, զոր նռատենին
մէջ դրած մեկտեղ կը տանէին մինչև հե-
ռաւոր գիւղը։ Ուղևորք որոցմով խռնեալ
էր համարն և գետին մոտ գիւղերն, եր-
կայն չրջագծեան մ՝ունէին ի կուսուց, որոյ
վրայէն ուրիշ կարգ մ՝ սալաւորեալ
բուրգէ, և ուսկրէնէն հողմնաչարժ սպիտակա-
թոյր լոգիկ մը։ Գլուխնուն վրայ ունէին
կարգ արտասուրակ մը սպիտակ վերջաւ-
որք, որով ամիսոի կը՝բռնէին հիւսեալ եր-

digitised by A.R.A.R.@

կայն մասերինն. ոտքերնին մարթէ տրեխներ, և ձեռքերնին երկայն գաւազաններ՝ քանդակագործեալ, կերպարանելով շուշան մը, վարդ, առիւծ, արծիւ, կամ ուրիշ տեսակ կենդանի մը։ Այն կողմ առատութիւն, ճոխութիւն և կենդանութիւն, ամէն կողմ զուարթ վկայութիւնք ժողովրդեան մը բարեբաստութեան, որոյ պարիսպներն, պատուարքն, բուրգերն և աշտարակներն կը փայլէին հորիզոնին վրայ, նկարելաբ ասկեղծոյն և ծիրանեգոյն ի ճառագայթից լուսաճաճանչ արփւոյն, որ քանի մի ժամաւ անցեր էր քան զմիջօրեայն։

Այս հիանալի տեսարանը դիտելու գրաւած էր հետաքրքիր ու տխուր ոչոք պատանի հնծեալ մը, որ կը յառաջէր մեզմա-քայլ գետոյն աջակողմեան ափունքէն, և ունէր յոգնաթիւ զօրաց գումարտակ մը և կարասկիր մեծաձոխ սայլեր։ Արդէն խակ մարգկանց այդ ամբոխն անցեր էր իս գեղը՝ բարձրացեալ կարոյ հեղեղին բերանը, արդէն թոզեր էր իր ճախակողմը Սիպարայ վաղնջական աշտարակները և Նահր Մալքա թագաւորական լայնահիտ ջրանցքը, որ դեռ նոր բացուեր էր ընդ մէջ Եփրատայ ու Տիգրիսի, և Բաբելոն իր ամենայն հսկայագործ պարծանօքն բացուելով օտարականին ուշն (վասն զի այնպէս գուշակել կու տային խարտեշագոյն մազերն, կապուտակ յօնքերն, և ամէն բանէ աւելի հանդերձից ու գինուց օտար տարազը), կը տպաւորէր դիմացը վրայ զարմանաց ու տխրութեան զգացում մը, ինչպէս ըսինք կանխաւ։

Օրուան արշալուսոյն հորիզոնին վերջին սահմանաց վրայէն տեսնալով այդ պատանի հնծեալն մեծատարած քաղաքը, նոյն վայրկենէն տարապայման անհամբերութիւն մը տիրեր էր նոգւոյն վրայ։ Հնծեալգունդն թէ և գ'երագէր քայլերը, և աւելի կարճ ժամանակ կը տրուէր հանգըստեան, սակայն արեգանն յառաջելով երկնից կամարին վրայ, անհանդուրժելի տապով կը հարկաւորէր զնոսա գիշեր ատեն հատանել այդ փոշելից ուղին, ի լուութեան մտերիմ լուսնոյն՝ որ բոլորպայծ էր յայնժամ։ Սիրվան ամսոյն վերջին օրերն էր՝ որ բաբելական տարւոյն երրորդ ամիսն է, վասն զի իրենք գարնան կը սկսին տարին, երբ Հայաստանի լերանց ձիւներն հալելով գ'ածին Եփրատայ ջուրերն տարապայման օրինակաւ։ Դարձեալ Սիրվան ամսոյն արեգական տապը ստարբերելոց ցօղնոց հասկերն ատոքացնելէն զատ, նեղելով կաւոյն որ ագիւռոյ ձև առնու, Սենաարայ մարդիկը սնուանելոյն գարձեալ զայն՝ ամիս ադիւռոյ։

Ադեօք կը փափաքէր պատանի հնծեալը շուտով Բաբելոն հասնիլ։ Ի՞նչ կը նշանակէին մերթ հետաքրքիր և մերթ տխուր հայեցուածքն որ գ'ուղղէր յայս կամ յայն կողմն, բիրելով դիմացը վրայ անսովոր խառնուրդ մը հակառակ զգածմանց։ Երբեմն կը խոտորէր աչքերն ուղղոյն նպատակէն, կը գներ զնփրատ, և կը գիտէր մանկական հետաքրքրութեամբ այն լիւղկան սայլերը, որ սպիտակ վարագուրաւ ծածկեալ ու սափորներով բեռնաւորեալ, կը տանէին արմատնոյ արբեցուցիչ հնդանիթ, զորոնք մեզմէնթաց յառաջ կը մղէին երկայն ձողերով, իջնելով զանազան խորութեամբ մինչև գետոյն տաշտը մղելու համար։ Ջիչ մ'անդին կային ուղղորք յոլորմ վիճակի, որոնք հետիոտն ուղևորութեան նեղութիւններէն, ինչպէս նաև ճամբուն փոշէն ազատելու համար, պատմուճաններն փակեղաձև գլուխնուն վրայ փաթթած՝ կը հետևէին գետոյն ընթացիցը, պինդ ունելով բազոյց տակ ուռուցեալ տիկ մը։ Ուրիշ կողմ ալ կային կանայք, որոնք գիւրաւ կը ճանչցուէին իրենց սպիտակագոյն զգեստէն, որ կը ծածկէր գլուխնին ու պարանոցնին։ Թեթև ու յաջող լիւղորդք, որ մէկ ձեռքով կը լիւղային ջրոյն երեսէն, և միւսոյն վրայ զոր ի վեր բարձրացուցեր էին, ինչպէս նաև կանգուն պարանոցին վրայ, կը կրեին պրոտոզոյ կողովներ, կամ կաթի ըմպանակներ ի զովացումն ուղևորաց։

Զուարճալի տեսարան, բայց պատանւոյն զուարճութիւնը երկար չէր տևէր։ Մերթ ընդ մերթ կր մթաքնէին աչկուքը յօնից կնճռեալ կամարին տակ, որպէս թէ ցաւալի մտածութիւն մը զար յանկարծ ու խոցոտէր զինքը։ Կը գոռար՝ որպէս թէ անծանօթ բանէ մը կը վախեր, չրթունքը կը մընչէին ընտանի անուն մը։ Իսկ երիվարն կը վազէր, կը թեւաւորուեր և կը մռնչէր իր փոփոխամիտ տիրոջը յանկարծական ցընցմանց տակ։

Կուգային եռանէն իր ուղեկիցքն, ծանրաշարժ ու չքեղապանծ, ի նշան յարգանաց դաշն ձայնիւ ևեթ խօսելով։ Մինչև իսկ Պարետ, սրտակիցն իւր Պարետ, որ հնծեալգունդին առջևէն կ'երթար և գլեթէ իրենն հաւասար հնծեր էր, երկար ատեն բերանակապալ կեցեր էր, վախնալով որ չբլլայ թէ այսպէս իր տիրոջը գաղանի խորհրդոց չարքը։

Կնձնեաց պուրակի մը ծայրէն դառնալով՝ որ կը ծածկէր ընդարձակ տարածութեամբ

digitised by A.R.A.R.@

դեսին յաճախաւոր ծոցից մէկուն վրայ երկիրը, տեսնուեցաւ յանկարծ տանց բազմութիւն մ՝արքունական ուզոյն եղիրաց վրայ, որոնք ամենքն ալ քաղաքի երևելի ընծայէին՝ առատաձեռ որմերով և ցանկապատ ծաղկաազարդ բուրաստանօր։ — Այսկա Բաբիլու արուարձաններէն մէկն էր, բազուկ մեծազօր՝ զոր կը տարածէր շուրջանակի արքայական քաղաքը, վասկի բաւականը ընդունելու իր զօրաւոր կենաց աւելորդ մասը։ Ընդարձակ հրապարակին մէջ ուսկից կը սկսէր արուարձանը, բաբելական հնձելոց բազմաձեռն գունդ մի կեցեր էր. գեղեցիկք էին աչաց տեսութեան իրենց զարահիւթն և մարթէ սոնապանօր, որոց վրայէն ծածանէին քղանցք։ Այսպանգակաց վրայ նիգակ ունէին, գլուխնուն վրայ սաղաւարտ սրածայր սեպով. իսկ ի համեմեց կախեալ էր լայտ երկաթակուռ։ Այսոնց չորս կողմը արք և կանայք ձեռքերին սուիր ու անօթ առած, ծաղրուելաց կուէ բաժանով ջրոյ մէջ լուծեալ նման հայդ կը մատուցանէին։

Պատանի հնձեալն կանկ առաւ ճամբուն մէջ տեղը, ըստ արքան բաւականին հեռի յուղեկացոյն, նոյնպէս և կարասէկիր սայլք ըստ կարգին։ Երկու կողմանց երիվարքն ողջունեցին զիրար ի ընչին և ի խնչիչն։

Օտարականաց գալուստը տեսնալով Բաբելացիք մէկէն ի կարգ մտեր էին։ Իրենցմէ մէկն, գլխաւոր հրամանատուն ոսկիակալ սրոյ կապարանօք, եկողաց ընդառաջ գնաց աշաւակի։ Պարտեալ լսելով իր տիրոջ հրամանները, դիմեց և նա ընդառաջ նորա։

— Ո՞վ է այդ օտարականը, — հարցուց Բաբելացին առ Պարտեա, — որ հնձեալ է ի ձի ձեր առջևէն, որպէս իշխան ոմն ի գլուխ անցեալ իր հպատակացը։

— Զնա ճանչնար Հայաստանի թագաւորը, — պատասխանեց Պարտեա, — դՍՔրա, զորդին Արամայ ի ցեղէն Հայկայ։

Այս խօսքին խոնարհեց Բաբելացին գըլուխը երիվարին բաշից վրայ, անանկ որ գեսին գալա ազեղնաձև թրանը ծայրը։

— Պէտք էի գուշակել զայն, — յաւելապա, — վասն զի աստուածանման կերպարան մ՝ունի, և Նիրու սիտեր է իր յսկից վրայ՝ իբրև յորդի ամենասիրելի, երկնային կամարաց նուիրական գոյնը։

Եւ մէկէն երիվարէն իջնալով, գնաց Հայոց թագաւորին երիվարին երաստանակը բռնելու ի նշան պատուոյ և յարգանաց. և ապա յաւել.

— Ողջո՛ւյ հասեր, Արա Գեղեցիկ, որդիդ Արամայ, երջանիկ ամուսան և բարեբախտ օրուան մէջ ի դրունս Բաբիլու։ Մեծն Շամիրամ՝ որում շնորհեց Բէլ յաղթութիւն սրոյ և գաւազան իշխանութեան ի վերայ ժողովրդոց երկրի, կը սպասէր անհամբերութեամբ շնորհալից իշխանիդ և ազնուական հարիւդ։

— Ոչ հարկ, այլ ընծայ, — պատասխանեց մէկէն Հայոց թագաւորն, կնճռելով դյմանն։ — Բաբելոն զօրաւոր է, բայց Հայկայ ցեղն Նիմրոտի բարեկամութենէն աւելի իւր սրոյն կ՝ընծայէ մարգարտայեռ վարսակալ կրելու իրաւունքը։ Մեր հարքն նախ թշնամի և ապա բազում անգամ բարեկամք եղան մեծատարած դաշտավայրիդ թագաւորաց հետ. բարեկամք ենք խոնարհամիտք և ոչ հպատակք։

— Այդպէս ըլլայ, — յարեց միւսն հլութեամբ, — լաւագոյն է բարեկամ՝ խոնարհամիտ քան հպատակ դժուարասանձ։ Արդ հասէ, վերհանձն արքայ, և եկուր այն սենեակը զոր սահմանեց քեզ Շամիրամ՝, որպէս զի բարեկամ թագաւորի արժանաւոր հանդիսիւ Բաբելոն մտնալդ առաջ սթափիս յաշխատութենէ երկայնօրեայ ուղղդ։

Հայոց թագաւորն առանց բառ մ՝արտասանելու ի պատասխանի պատուագիր հրամարանցն, թեթև ակնարկութեամբ գլխոյն ու մարգավար շարժմամբ՝ հրամայեց Բաբելացւոյն ելանել յերիվար։ Այրա կ՝ուզէր մտրակել զերիվարն ու շարունակել ուղին, բայց կ՝արգիլուէր ի մարգասէր ցուցակութենանց բնակչաց տեղւոյն՝ որ խըռներ էին ճամբուն վրայ, գինի մատուցանելով օտարականացն։

Օրիորդ մը քաջալերուելով մերձաւորաց յորդորներէն, բայց չառաջնորդեալ դիմօք ու գողդոջուն մարմնով յառաջեց դէպ ի պատանին՝ մատուցանելու հիւրընկալ բաժակ մը։ Այրա յոժարակամ ընդունեցաւ զայն օրիորդին ձեռքէն, չրթանցը մօտեցուց և ապա նա դարձուց բարեժիտ զըւարթութեամբ, մինչդեռ օրիորդն կեցած կը դիտէր յանկարակալ մուրք զպատանին, և բաղձութիւն իրեն չորս կողմն առած կը կրկնէր անդադար. Արա՛ Գեղեցիկ, արդարև աստուածանման է դա։

Եւ իրաւի, ասկէ աւելի արժանաւոր անուն չէր կրնար սեպհականել իր թագաւորին Հայաստանի ժողովուրդը, զոր սրաթռիչ համբաւն արբացուցեր էր ի բերանս ամենեցուն՝ Եփրատայ ու Տիգրիսի մեծաձիգ հովտին մէջ։ Մարմնագեղ, թեթևանդամ միանգամայն և կորովի կը տեսնուէր նա ուղևորի անպաճոյճ հանդերձից տակ.

digitised by A.R.A.R.@

ծածկուած էր փոքրիկ հողմաշարժ թիկնոցի մը ծալքերուն ներքև, փակելով զլանչն գորշագոյն բանկոնաձ ծալտերեներ՝ ի կարմիր, և զմէջն բուրդէ փաթեթով՝ որուն տակէն հանգուցուէին սրոյն կապերը, հաստատարիմ բարեկամ սրտին։ Դեղձան ու գանգուր մազերն մուշտակէ սեագոյն գըլխանոցին եզերքներէն ցցունազարդ դուրս ելեր էին, ականակուռ ու փետրազարդ, վայելչապէս պատկերով ձիւնափայլ երես մը, ճշմարիտ հայկի հոգւոյն՝ որ ներքին փոքրիկ պայծառութենէ անգամ մէկէն կը շիկնէր։ Ցօնից լայն ու ցցուեալ կամարն չքնաղագոյն ևս կը փայլեցնէր նորա կապուտակ աչաց ջինջ պայծառութիւնը։ Հոլանի այտերն, կզակն ու պարանոցը հանդերձ իրենց միւս վայելուչ մասերովը, ծայրասուր ունչն՝ ուղղագիծ ճակատուն, վերին շրթունքն զարդարեալ երկայն, նուրբ և գեղաբոյս ընչացքով, կը ցուցընէին նորա ազնուական դիմաց վրայ քաղցրութեան ու զօրութեան անբաժանելի խառնուրդ մը։

Կարծես վերկենդանացեալ էր ի նա Հայկայ հինգերդ դէմքն, զօրաւոր նախահայր իւր ցեղին։ Պարեղջուք Հայոց հագնեցուցեալ նուագէին զնա կորովաձիգ, սանձահարիչ երիվարաց, քաջամարտիկ և անպարտելի, նման իր նախահօրը։ Ինչպիսի՞ երջանկութիւն։ Հպատակ ժողովրդեան աչքն իրեն վրայ էր, պատերազմական ոգինք գովբանէին զնա, առ նա հառաչէին բարետեսիլ կանչք Արմաւիրայ և ափանց Վանայ։ Արա գեղեցիկ, Արա քաջ, Արա ամենասիրելի երգէին նուագք։

Պէտք եղած ժամանակն տալէն ետքը, ոչ եթէ ի զարմանս արուարձանեայ ժողովրդեան, այլ յընդունելութիւն հիւրասէր ըմպելեցաւ Հայոց թագաւորն, և իրեն հետ բազմագումար հեծելազունդքն, ահագին շառաչմամբ կազմածոց ու պատեհաւոր սուսերաց, և մեծաւ զօրանջմամբ նետիցն որ կը շարժէին ի կապարձս իւրեանց կախեալք յուսոցն հանդերձ հայկական մեծայաղթ ազնուամբ։ Հայոց պարուն առջևէն կ'երթային Բաբելացի հեծեալքն ի նշան յարգանաց։

Արդէն արեգակը շատոնց խոնարհէր էր հեռաւոր անապատին սահմանէն վար, երբ հասան վերջապէս հայկական հնչեալքն իմկուր Բելի առջին, որ լայն պարապին շրջապատն էր, որոյ աչտարակաց կատարքն սեագոյն կ'երևային, սակաւ մի յառաջ կարմրագոյն ի վերջին ճառագայթից արեգական, և այժմ կապտագոյն յանխմանալի լուսոյ ստանոյց։ Անսովոր, զարմանալի ու գեղեցիկ տեսարան մ'էր։ Ի խորս անդ ամբիսակողման, Պարսիրա, քահանայական քաղաքը, սրբավայր Թաքուն իմաստութեան Աքքատից, երկնաչափ ի վեր կը բարձրացնէր իր մեծակառոյց շէնքերը։ Եօթն լուսոյ աչտարակն, որոց գունագեղեալ բարձր հովանոցները ցոլացուցեր էին ի ճառագայթից արփւոյն զանա. շղշղուղուն, զսպիտակագոյն, զնարնջագոյն, զկապտագոյն, զծիրանեգոյն, զարծաթագոյն և զոսկեգոյն, նուիրականք եօթն լուսատու գընտից, ոչ այլ ինչ ընծայէին ի տեսանելիս, քան եթէ թխագոյն կոյտ մը սանդղաձև, սանդուղ իրաւունքն՝ չնեալ մեծազօր ժողովրդեանէ մ'արշաւելու երկնից դէմ։

Դէպ ի միջավայրն կը բարձրանար աշտարակաձև բուրգն մի հռայարկ, նուիրեալ հիմանց երկրի, որոյ ստորոտը կը տարածուէր մեծ քաղաքն՝ յերկուս բաժանեալ յԵփրատ գետոյ։ Թիչ մ'ալ առաջ, յահեկէ գիտողին, կը ծաւալէր մեծագոյն խումբ մի բազմաձև շինուածոց, հովանոցաց և աշտարակաց, որոց մէջ կը կանգնէր ուրիշ մեծակառոյց շինուած մ'ալ, Շամիրամայ արքունիքը, փոքրիկ քաղաք պատնիշապատ ի ծախակողմն գետոյն, պակեալ մեկենութ, պատշգամաք և բուրաստանաք, որոց միջէն տեկոց ճոխ բազմութիւն մը, արփւնք օտար աշխարհաց, ի վեր կը սփռէին իրենց սաղարթախիտ ոստերը։ Եւ լուսինն փայլելով նոյն կէտին վրայ, կը զարդարէր շրջենման լուսով այդ դիւթական հրապուրիչ տեսարանը, որ կամաց կամաց կը պայծառանար հեծելոց առջին՝ իմկուր Բելի առօտ առաւիտանէից ետեւէն, քանի որ կը մօտենային փոսին։

Հասան վ'ըլալէս կամրջին գլուխը, և տեսան որ բացուեր էր պղնձագործ դուռը՝ ճանապարհ բանալու նոր այցելուսոյն Բաբելոնի։ Հնչեցին պղնձածոյլ փողերն, կոխեցին երկաթագատ սմբակք երիվարացն նոճենաց ընդարձակ տախտակամածը, և որոտաց խորին միջնադարեանն՝ պաշտպանեալ ի մեծ ամրոխէ տիգաւորաց։ և Հայոց թագաւորն մնաւ չքնաղակերտ կամարայարկին տակ, ի լոյս ծխալից կայծիթեալ ջահից, ի մէջ մարդակերալ ցլուց և հսկայաձև եղջերուաբաղից, որ կարծես կասկածանօք ու գուռոդութեամբ կը դիտէին նոր հիւրերը իրենց վիմարդեայ յօնից տակէն։

Միջնադարեանքը, և անոր հետ պարսկին առաջին շրջանակն անցնելէն ետքը, հեծելոց առջին լայնարձակ դաշտագետին մը բացուեցաւ, շրջափակեալ յանկից և յաջոյից, ապա ուղի մը ընդ մէջ երկու չար անկոց, ատա և անդ հատեալ ի փոքրագոյն

digitised by A.R.A.R.@

չուշագոյ, ունենալով ջրոյ առուակներ՝ արբուցանելու տունկերն 'ի տապոյ բոցատոչոր արեգական։ Թանձրախիտ ծառատունկեր շուրջանակի, նաւակայաններ տուներուն առվն, գրեթէ ամենքն ալ հաստակաց չէնքեր ու զարմանիստ բնակարաններ, ընդ մէջ արտաքին պատուարին ու Նիմրոդի Բելայ, որ քաղաքին երկրորդ ու անձկագոյն շրջապատն էր։ Սակայն ամենից կը լսուէին բաբելական վաստակաւէր կենաց ձայներն, շառաչքն ու աղաղակներ, որպէս բզզիւն մեծի փեթակի։

Պատանի իշխանին նոցն բանը հանդիպեցաւ ինչ որ կը հանդիպի այն ամէն մարդոյ՝ որ կը գտնուի նոր քաղաքի մը մէջ։ 'Ի խլրատիւն և 'ի շառաչիւն անձանօթ մարդկանց որ երթևեկեն զբաղելով իրենց գործոցը, առանց միտ դնելու օտարին, որ կարծես աւազահատ մ'է՝ զոր պատահարն կը խառնէ իր մրրկածուփ պտուտից մէջ։ Իշխանն անհանգիստ, լքեալ և խռովեալ էր, և գրաւեր էին զինքը այն ամենայն տեսակ տիրութիւնք, որ ոչ թէ ստոյգ պատճառէ մը յառաջ գան, այլ արգասիք են վարանմանց ու անստուգութեանց։ Նորատունկ բոյս մը՝ որ օտար երկիր կը տնկուփոխի, քիչ մը ժամանակ լքեալ կը մնայ, այնպէս կ'երևցընէ թէ տրտմած ըլլայ, մինչև որ վարժի տեղոյն և արմատներն սկսին ըմպել նոր բնակութեան կենաբեր հիւթերը։

Որչափ կը յառաջէր Արա, այնչափ աղաղակաց ձայներն կը ստստանային, և հեռուէն զուարթադէմ մարդկանց գանգատն խումբեր դուրս կ'ելլային, որոնք սոսեաց ընդարձակ ստուերին տակ սիրտաբկգոյն երևալով, կը պարծառանային ստուգին լուսէն, և յաճախաց կամս հայեցագ մը տալով անձայն հեծալագնդին, ուրիշ ճամբայ կը խոտորէին 'ի ձախակողմն եկողաց, և մերձաւոր անտառակի մը միջև յանկարծ երևէին ու աներևութանային։ ուսկից՝ կիտրոնից և յաճիկաց անուշահոտութեանց հետ, լուսոյ ճառագայթներ ալ կը ցայտէին ու ցնծալից ներդաշնակութեանց ձայներ կը լսուէին։

Պարեա, որ Խմիոր Բելէն ներս մտնալէն ետքը, չասպելով երիվարին քայլերը՝ թագաւորին մօտեցեր էր նորա ակնարկութեանցը աւելի պատրաստ գտնուելու, ընդհատուց երկիւղիւ լուութիւնը և ըսաւ։

— Ցնա լսեր, տէր իմ, տարփոր ձայները։

— Այո, — պատասխանեց պատանին տխրութեամբ մը ծռելով գլուխը, — Յանտի շատ աւելի յարմար էր քաղցրագոյն և հնչեցնելու այդ նուագարանը, և անուշ ձայն մ'ունէր երբ կ'երգէր իր դաշնակաւոր երգերը։ —

Պարեա ամաչելով բերանը չի բացաւ 'ի պատասխանի։ Բայց իշխանն կարծես արագաքալ ուզելով մոքին այդ տխուր յիշատակաց մտածութիւնները, դարձաւ բաբելական զորապետին՝ որ յաջակողմն էր, և հարցուց 'ի լեզու Կենաարայ։

— Բարեկամ, ինչ են այս ձայները։

— Գիշերս լիալուսին է, — խօսոյն պատասխանեց միւսն, — և տօն կը կատարուի Մելիգդայ Զարբանիգայ, դիցուհի երիտասարդութեան, գեղեցկութեան և սիրոյ, միմիթար սրտից, հոգի և կեանք բազմաբեղուն բնութեան։

— Զուարթ է Բաբելոն, — գոչեց Արա բազմախորհուրդ։

— Այո՛ զուարթ, — կրկնեց հեծեալն, — և դու, ով տէր մեծազօր, աղէկ վայրկենին կը հասնիս 'ի Բաբէլոն։ Կերպարանքդ, շնորհալից իբրև դիներկայ, աստղ կարմրագոյն լուսոյն, սիրտ բաբախէ Բաբելոնի գեղեցկատեսիլ դստերաց սիրոյը։

Քաղցր ծիծաղ մը ծաղրնկէց բրաւ իշխանին շրթունքը։ Գեղեցկութիւն՝ բարեմասնութիւն մարմնոյ, ինչպէս և առաքինութիւն՝ բարեմասնութիւն հոգւոյ, չեն անգգայք գովութեան։

— Շո՛ւրջն կախարդիչ, — ըսաւ Բաբելացին։

— Հասարակաց է հանդէսն, — հարցուց Պարեա ընդհատելով նախընթաց խօսակցութիւնը։

— Նուիրական անտառն բաց է ամէն այցելուաց։ Կը համախմբին ստտ ժողովուրդք Սենաարայ և օտարք հեռաքակ աշխարհաց։ Թէ որ կը հաճիս, — շարունակեց Բաբելացին, ուզղելով խօսքը առ իշխանն, — մեծ թագուհւոյն այս գիշերուան համար քեզի որոշած բնակարանը իջնուիր։ Ուրեմն գալ ու խառնուիլ համարձակ ամբոխին մէջ, ուր կը տեսնաս առանց ճանչցուելու՝ գազնուական պատանիս, զօրիորդս և զիանայս Բաբելոնի։ Ահաւասիկ այս է քեզի ու քու հեծելոցդ համար որոշուած բնակարանն։ պահէ գլեզ Ներու քու հպատակացդ։ —

Ցիրաւի հեծելագունդն հասեր էր կրրկնայարկ չէնքի մ'առջեն, որոյ ամրակուռ և խորհրդեմն որմունքն հաստատուած էին ադիւսէ որմակալներով, մինչև այս ինչ բարձրութեամբ։ Դրան մեծ կամարն անցնելով լայնարձակ գաւիթ մ'ընդ առաջ կ'ելլար, որոյ կողից վրայ կը բացուէին մեծամեծ ախոռներ՝ կենդանեաց համար, և բնակա-

digitised by A.R.A.R.@

րանք զօրականաց ու ծառայից. Իսկ վերին յարկը Թագաւորին և իւր պաշտօնէից սենեակներն էին։

Իջնելով յերկվարաց, Հայոց Թագաւորին պաշտօնեաներն սկսան աշխուժութեամբ իրենց հանգստեան պատրաստութիւնները կատարել։ Հեծեալք 'ի բաց առնուին զկազմածն, կը քօրէին և կը զովացնէին բազմաշխատ նժոյգները. ուղտապանք, կորասեպանք ու ծառայք 'ի վար կ'առնուին պաշարները, կազմածները և մեծագին անօթները. վերջապէս ամենքն տեսնալով թէ բան մը չէր պակասեր հաւատարիմ ուղեկցաց, կը մտածէին սթափել զանձինս՝ կերակրօք, ըմպելեօք ու քնով։

Արա՝ Պարետի հետ իր բնակութեան յարկը գնաց։ Արքունեաց երկու ներքինիք հոն կը սպասէին ցուցընելու իրեն ննջարանը, զարդարեալ բազմածախ գորգերով, փափկամորթ երէոց րուրդերով և փետրալից կակուղ անկողնով 'ի խորս անդ սենեկին, ծիրանեփայլ ծածկարանի մը տակ։ Նախ զգեստատունը տարին զինքը, քաղցրաբոյր ազգի ազգի հոտոտելեօք, և ապա 'ի գաղջ լուացարանն, ուր ջուրն պղնձագործ առիւծի մը բերանէն քարակերտ մեծ աւազանի մը մէջ կը թափէր։

Մինչդեռ պատանի իշխանազունն այս հոգոց զբաղեալ էր, որք բնականք են յետ երկարատև աշխատալից ուղևորութեան, սկսան իրենք պատրաստել սեղանոյն վրայ քաղցրահամ խորտիկներ, մաքրափայլ սպասներ, ձիւնանման զով ջուր և արմաւենւոյ արբեցուցիչ հեղանիւթ։

Քիչ առենէն ելաւ Արա զգեստատունէն վայելչացեալ գեղեցկութեամբ ու մանկութեամբ։ Ի բաց դնելով փոշելից զգեստն և հայրենի տարազը, հագեր էր կրկնածիրանի բաբելական, որոյ արտաքին երեսը սպիտակ էր ոսկեգոյն վերջաւորօք, իսկ ներքսակողմը կապուտակ. նոյն գոյնով էր նաև քղամիդն զոր կրէր 'ի վերայ ուսոցն ծալ 'ի ծալ։ Կապտագոյն էին նոյնպէս գուլպաներն, որ մինչև ծունկերը կը հասնէին. իսկ արտախուրակն սպիտակ ոսկեգոյն վերջաւորօք։

Զատոնք և ուրիշ սոյնց նման զգեստներ պատրաստեր էր Հայկայ Թոռին Շամիրամայ արքայական հիւրընկալութիւնն։ Արա անոնց միջէն ստորնագոյնը ընտրեր էր, բայց ի՛նչպէս կրնար եղածէն աւելի ստորին ցուցընել։ Գեղեցկութիւնն ու պատանեկութիւն աւելի կենդանի և զուարթ լոյս մը կը ցոլացնեն, քան եթէ ոսկին և ակունք պատուականք՝ վայելչութիւն ու գեղեցկութիւն իրենց շրջապատած առարկային։

— Յիրաւի, — ըսաւ Պարետ երբ յանկարծ տեսաւ զինքը կերպարանափոխ, — բաբելացին իրաւունք ունի. ո՞վ կրնայ չը սիրել զքեզ, ո՛վ տէր։

— Ա՜հ, — պատասխանեց իշխանազունն տխրադէմ, դիտելով իր փոփոխեալ զգեստները. — Այսպէս կը զգենուր Սանոր, դժբախտն Սանոր։

Եւ այսպէս ըսելով, ընկաւ նստարանի մը վրայ հանդէպ սեղանոյն։ — Բայց Պարետ չախորժեցաւ իր տիրոջը տխուր մտածութեանց դարձեալ նորոգուիլը։ Միայն ընդ միայն էին և առանձին, և բարեկամութեան իրաւունքն յաղթեց պատուոյ իրաւանց։

— Ցած կաց, ո՛վ տէր իմ, — գոչեց նա զօրավիգ ձայնիւ, — չըլլայ թէ ընկճիս 'ի տրտմութենէ հին մտածութեանց և յիշատակաց։ Այսպիսի է կենաց պայմանն ամենուն համար հաւասարապէս. լոյս և խաւար, ծիծաղ և արտասուք։ Գերեալ ենք 'ի կամս դից, ամենայն ինչ սպասէ մեր մահուան. ցուցընենք ուրեմն զմեզ արք քաջութեան առաջի ճակատագրին։

— Ո՜հ, Պարետ, սիրելիդ իմ Պարետ, գիտեմ զայն, ամենքս ալ պիտի մեռնինք օր մը։ Բայց կրնամ արդեօք մոռանալ պատանեկութեանս բարեկամը։ Այս քաղաքս գերեզման մ'է, որուն կ'իշխէ Շամիրամ։

— Դու կը տեսնաս զայն վաղը. Բաբելացին ըսաւ քեզ զայն, երբ կը մեկնէր քեզմէ. վաղուան թող ուրեմն տխուր մտածութիւններդ։ Եկ, տէր իմ, մինչև վաղը անծանօթ ենք 'ի Բաբելոն, և ի՛նչ քան զայս լաւագոյն բախտ տեսնալու զԲաբելոն։ Եկուր, կը սպասէ մեզի Միլիդդայ Զարբանիդայ մեհեանը. կը խոստանի մեզի համբաւոր գիշերային պաշտամունք։

Կը շարունակուի։

digitised by A.R.A.R.@